



2018թ. փետրվարի 5-ին Երևանի Սոս Հոլսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցում 10-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ հերթական անգամ բաց դաս է անցկացրել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, հնագետ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադալյանը: Դասը նվիրված է եղել «Կարմիր բլուր» հնավայրի նշանակությանը, պահպանությանն ու արժևորմանը: Դպրոցի և մասնաճյուղի տնօրենները պայմանավորվել են՝ շարունակելու հաջողված համագործակցությունը, դպրոցում և հնավայրում հաճախակի դասեր անցկացնելու, համատեղ միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ: